ՀԱՍՄԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը ինստիտուտի մինչև 35 տարեկան աշխատակիցներին միավորող կառույց է: Խորհուրդը հիմնականում զբաղվում է ինստիտուտի երիտասարդ աշխատակիցների և ասպիրանտների գիտական աշխատանքների համակարգմամբ, նրանց մասնակցությամբ երիտասարդական գիտաժողովների կազմակերպման, գիտական աշխատանքների հրատարակման և հարակից հարցերով:

Պատմության ինստիտուտը հիմնադրվել է Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի ստեղծման հետ միաժամանակ՝ 1943 թ. նոյեմբերին: Ինստիտուտի հիմնադրմանը հաջորդող առաջին երկու տասնամյակներին երիտասարդական գիտաժողովներ չեն անցկացվել, չի եղել նաև երիտասարդներին միավորող մարմին:

Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հասարակագիտական հիմնարկների երիտասարդ աշխատակիցների և ասպիրանտների մասնագիտական աճի համար Ակադեմիայի ղեկավարությունը կարևոր խնդիր համարեց երիտասարդական գիտական նստաշրջանների անցկացումը:

Արդեն 1962 թ. փետրվարի 13-ին ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների անդրանիկ կոնֆերանսը: Այստեղ ելույթ ունեցան 4 երիտասարդներ՝ կրտսեր գիտաշխատող Լավրենտի Բարսեղյանը («Դիտողություններ հին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների շուրջը (15–13-րդ դդ. մ.թ.ա.)», լաբորանտ Հասմիկ Իսրայելյանը («Ուրարտական նորահայտ դամբարան Երևանում»), կրտսեր գիտաշխատող Վերժինե Սվազլյանը («Մուսա լեռան հայ ժողովրդական բանահյու-

---

* Զեկուցում՝ ընթերցված ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների XXXIV նստաշրջանում:

սությունը») և կրտսեր գիտաշխատող Էմմա Պետրոսյանը («Զգեստավորումը միջնադարյան Հայաստանում»)[1]:

Նմանատիպ կոնֆերանս կազմակերպելուն ուղղված քայլեր ձեռնարկեցին նաև Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ղեկավարները՝ տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Արամայիս Հարությունյանը (Հարենց), գիտական հարցերի գծով փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Գագիկ Սարգսյանը և գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վլադիմիր Բարխուդարյանը: Առանձնապես մատնանշելի է Գ. Սարգսյանի և Վ. Բարխուդարյանի նախանձախնդիր աշխատանքը:

Ինստիտուտի գիտական խորհրդի 1962 թ. հունիսի 29-ի նիստում, որին ներկա էին նաև կոլեկտիվի անդամները, Գ. Սարգսյանը ներկայացրեց «Ինստիտուտի ասպիրանտների գիտական սեսիա կազմակերպելու մասին» հարցը: Նա նստաշրջանի անցկացումը հիմնավորեց երիտասարդ պատմաբանների մասնագիտական աճի, նրանց գիտական աշխատանքի նախապատրաստելու և որպես հետազոտողի ձևավորման տեսակետից: Իրենց ելույթներում ասպիրանտների նստաշրջանի գաղափարը ողջունեցին տնօրեն Ա. Հարությունյանը, գիտքարտուղար Վ. Բարխուդարյանը և սեկտորի վարիչ Արշավիր Հակոբյանը: Գիտխորհուրդը որոշեց նստաշրջանը կազմակերպել սեպտեմբերի վերջերին: Նախատեսվում էր լսել Սարգիս Բոռնազյանի, Վահրամ Մարտիրոսյանի, Գուրգեն Գեղամյանի, Հայկ Մելքոնյանի և Ռաֆիկ Հովհաննիսյանի զեկուցումները: Զեկույցները նախօրոք պետք է քննարկվեին բաժիններում (այն ժամանակ սեկտորներ էին կոչվում): Նստաշրջանի նախապատրաստումը և ղեկավարումը հանձնարարվեց Գ. Սարգսյանին[2]: Այդ ժամանակվանից էլ ինստիտուտում ավանդույթ դարձավ երիտասարդական գիտական նստաշրջանների կազմակերպման, իսկ հետագայում նաև զեկուցումների հիմնադրույթների խմբագրման ու հրատարակման պա-

---

[1] Խանզադյան Է., Երիտասարդ գիտաշխատողների գիտական կոնֆերանսը Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ, հասարակական գիտություններ», 1962, N 2, էջ 85–86:

[2] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1086, ց. 4, գ. 210, թ. 24:

տասխանատվությունը դնել գիտական հարցերի գծով փոխտնօրենի վրա:

Ինստիտուտի գիտխորհուրդը հաջորդ անգամ ասպիրանտական նստաշրջանի կազմակերպչական հարցերը քննարկեց 1962թ. հոկտեմբերի 16-ի նիստում՝ հաստատելով հոկտեմբերի 25-26-ը կայանալիք նստաշրջանի ծրագիրը[3]:

Նստաշրջանի բացումը տեղի ունեցավ հոկտեմբերի 25-ին, ժամը 12.00-ին ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի փոքր դահլիճում (Աբովյան 61 հասցեում): Ընթերցվեցին 8 զեկուցումներ:

Առաջինը զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի ասպիրանտ Գուրգեն Գեղամյանը: Նրա թեման էր՝ «Գյուղատնտեսության զարգացման նոր էտապի նշանակությունը կոմունիզմի ծավալուն կառուցման համար մղվող պայքարում»: Այնուհետև զեկուցումներ ներկայացրեցին՝ ասպիրանտ Ռաֆիկ Հովհաննիսյանը («Նոր նյութեր Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մասին»), կրտսեր գիտաշխատողներ Ստեփան Հակոբյանը («Արևմտյան Հայաստանը ֆրանսիական իմպերիալիստների պլաններում 1-ին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում») և Վահրամ Մարտիրոսյանը («Արևելյան Անդրկովկասի հարցը ռուս-թուրքական հարաբերություններում 1722–1724 թթ.»): Հոկտեմբերի 26-ին զեկուցեցին ինստիտուտի կրտսեր գիտաշխատողներ Սարգիս Բոռնազյանը («Կիլիկիայի հայ ասպետությունը 13–14-րդ դարերում»), Սիմոն Կրկյաշարյանը («Քաղաքների և միապետների փոխհարաբերությունները հելլենիստական աշխարհում»), Հայկ Մելքոնյանը («Հայաստանական մշակութային հարաբերությունները 4–5-րդ դարերում») և Հովհաննես Կարագյոզյանը («Ուրարտական հարկային սիստեմի մասին»)[4]: Ընթերցված զեկուցումները վերաբերվում էին հեղինակների թեկնածուական ատենախոսությունների առանձին հարցերի: Այս օրինակով՝ հաջորդ նստաշրջանների ժամանակ ևս խնդիր դրվեց,

---

[3] Նույն տեղում, թ. 32:

[4] Նույն տեղում, թ. 28: Ինչպես տեսնում ենք, բացի նախորոք որոշվածներից, ասպիրանտական գիտական նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան նաև ինստիտուտի կրտսեր գիտաշխատողներ Ստեփան Հակոբյանը, Սիմոն Կրկյաշարյանը և Հովհաննես Կարագյոզյանը:

որպեսզի երիտասարդները զեկուցումներ ներկայացնեն իրենց ատենախոսությունների թեմաներով:

Նստաշրջանի անցկացման բարձր գիտական մակարդակը (պատահական չէ, որ բոլոր մասնակիցներն էլ հետագայում դարձան պատմագիտության ոլորտի ճանաչված ներկայացուցիչներ) Պատմության ինստիտուտի ղեկավարությանը ստիպեց մտածել այն շարունակական դարձնելու մասին: Ուստի՝ ինստիտուտի 1962 թ. տարեկան հաշվետվության մեջ տնօրինությունը կարևոր համարեց մատնանշել. «Նման միջոցառումները մեծ չափով կարող են նպաստել կրտսեր գիտաշխատողների և ասպիրանտների գիտական ձևավորմանն ու աճին: Այդ առումով էլ այն պետք է գումարել պարբերաբար՝ յուրաքանչյուր տարի»[5]:

Այդուհանդերձ, 1963 թ. հնարավոր չեղավ ասպիրանտական նստաշրջան կազմակերպել: Այդ թվականն անցումային տարի էր. 1963 թ. գարնանը ինստիտուտի տնօրենի պաշտոնում Ա. Հարությունյանին փոխարինեց պատմական գիտությունների դոկտոր Գալուստ Գալոյանը: Երկարատև նախապատրաստական աշխատանքից հետո նույն Գագիկ Սարգսյանը 1964 թ. փետրվարի 25-ին ինստիտուտի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց «ասպիրանտների և կրտսեր գիտական աշխատողների երկրորդ գիտական նստաշրջանի» թեմատիկան[6]: Ինչպես տեսնում ենք, ասպիրանտական գիտական նստաշրջանը վերանվանվել էր ասպիրանտների և կրտսեր գիտաշխատողների գիտական նստաշրջանի: Հաջորդ տարիներին այն շարունակեց հենց այդպես էլ կոչվել, իսկ ներկայումս կոչվում է Երիտասարդ գիտաշխատողների գիտական նստաշրջան:

Երկրորդ նստաշրջանը տեղի ունեցավ 1964 թ. մարտի 26–28-ին[7]: Զեկուցումներով հանդես եկան Քնարիկ Գրիգորյանը («Հայ ծո-

---

[5] Նույն տեղում, գ. 45, թ. 21: Բացի այդ՝ շեշտվում էր, որ «ասպիրանտական սեսիան այն լծակներից մեկն է, որով հնարավոր է կատարել ՍՄԿՊ Կենտկոմի և Մինիստրների սովետի 1962 թ. մարտի 12-ի «Կադրերի ընտրության և պատրաստման հետագա բարելավման միջոցառումների մասին» որոշումը»:

[6] Նույն տեղում, գ. 212, թ. 18:

[7] Նիստի ծրագրում մարտի 26–27 է գրված (ՀԱԱ, ֆ. 1086, ց. 4, գ. 212, թ. 19-20): Ծրագրով նախատեսվում էր նաև Գուրգեն Գեղամյանի ելույթը «Սոցիալիստական

վայինները Կովկասի համար մղված մարտերում»), Ռաֆիկ Հովհաննիսյանը («Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման վերելքը 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո և հայ-քուրդ-ասորական դաշնակցության խնդիրը»), Վարդան Խաչատրյանը («Աստրախանի հայերի մշակույթը 18-րդ դարում»), Ժորես Անանյանը («Գրիգորիոպոլ քաղաքի հայկական գաղութի հասարակական կյանքի պատմությունից»), Լիզա Մարտիրոսյանը («Հայաստանի առողջապահության բնագավառի կին աշխատողները Հայրենական պատերազմի տարիներին»), Մաղլեն Հովհաննիսյանը («Լեհաստանի հայերի ինքնավարության օրգանների ֆունկցիաների հարցի շուրջ»), Սերգեյ Ալավերդյանը («Հայկական ՍՍՀ համատարած կոլեկտիվացման սկզբնական էտապի մասին»), Գայանե Պինգիրյանը («Լվովի հայ գաղութի հասարակական-քաղաքական պայքարի պատմությունից»), Վլադիմիր Ղազարյանը («Խ. Աբովյանի գաղափարական առնչությունները Վ. Բելինսկու հետ»): Գիտաժողովի վերջում ելույթ ունեցան և իրենց նկատառումները ներկայացրեցին ինստիտուտի տնօրեն Գալուստ Գալոյանը, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, պատմական գիտությունների դոկտոր Արշավիր Հակոբյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Գագիկ Սարգսյանը, Վազգեն Ոսկանյանը, Վլադիմիր Ղազախեցյանը, Համբարձում Կարապետյանը և ուրիշներ:

Երկրորդ նստաշրջանը նախորդից առավել լավ էր կազմակերպվել: Նույնիսկ նստաշրջանում արտահայտված ավագ գիտնականների խոսքերն են սղագրվել[8]: Ի դեպ, նստաշրջանի վերաբերյալ լուսաբանող հոդված է հրատարակել ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր»-ը[9]:

Առաջին երկու նստաշրջանների ծրագիրը պատկերացում է տալիս, թե կես դար առաջ ինչպիսի թեմաներով էին զեկուցումներ պատ-

---

մրցության ծավալումը Հայաստանի գյուղատնտեսության մեջ 1953–1958 թթ.» թեմայով, սակայն նա չի մասնակցել նստաշրջանին: Այդ երևում է նիստի սղագրությունից և նստաշրջանը լուսաբանող հոդվածից:

[8] ՀԱԱ, Ֆ. 1086, ց. 4, գ. 212, թ. 19–20, ց. 5, գ. 115ա, թ. 1–10 (արխիվային գործը սխալմամբ 1969 թ. է թվագրված):

[9] «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ, հասարակական գիտություններ, 1964, N 4, էջ 80–82 (հոդվածագիրը Վ. Սանթրոսյանն է):

ռաստում ինստիտուտի այն ժամանակվա երիտասարդ աշխատակիցները:

Երիտասարդական նստաշրջանների կազմակերպման, երիտասարդների գիտական և ժամանցային կյանքի անցկացման տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ ինստիտուտի Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի ստեղծումը:

1979 թ. Պատմության ինստիտուտի տնօրեն դարձավ պատմական գիտությունների դոկտոր Հրանտ Ավետիսյանը: Վերջինիս նախաձեռնությամբ էլ Նոր պատմության բաժնի աշխատակից, պ.գ.թ. Վաչե Հովակիմյանը նշանակվեց ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ: 1980 թ. նոյեմբերին Վ. Հովակիմյանը դարձավ ինստիտուտի գիտքարտուղար: Նրանից հետո երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահներ են հանդիսացել՝ Աղավնի Ութուջյանը (1980–1987 թթ.), պ.գ.թ., հետագայում ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանը (1987–1991 թթ.), պ.գ.թ., հետագայում ինստիտուտի գիտքարտուղար Ռուբեն Գասպարյանը (1991–1997 թթ.), պ.գ.թ. Քնարիկ Ավագյանը (1997–2005 թթ.), պ.գ.թ. Անահիտ Խոսրոևան (2005–2008 թթ.), պ.գ.թ. Արտակ Մաղալյանը (2008–2013 թթ.): 2013 թ. ապրիլից խորհրդի նախագահը պ.գ.թ. Համո Սուքիասյանն է:

Մինչև այժմ կազմակերպվել է ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 33 նստաշրջան: Անկասկած, բոլորն էլ կարևոր և օգտակար են եղել: Դրանցից առանձնացնենք 1980 թ. հոկտեմբերի 1-5-ը Աղվերանում անցկացված նստաշրջանը՝ նվիրված Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման 60-ամյակին: Այն կազմակերպել էին ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը և «Գիտելիք» ընկերության հանրապետական վարչությունը՝ Վրացական և Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտների հետ համատեղ: Բացի Հայաստանից, նստաշրջանին մասնակցեցին և ելույթներ ունեցան նաև վրացի, ադրբեջանցի, ռուս և ուկրաինացի երիտասարդ պատմաբաններ: Պատմության ինստիտուտից զեկուցումներ ընթերցեցին 11 երիտասարդներ, այդ թվում՝ Վաչե Հովակիմյանը,

Համլետ Հարությունյանը, Գայանե Մախմուրյանը, Գոհար Խաչատրյանը, Գասպար Կիրակոսյանը[10]:

Մինչև ատենախոսությունների պաշտպանությունը ինստիտուտի ասպիրանտների և կրտսեր գիտաշխատողների աշխատանքների հիմնական դրույթները փորձաքննություն էին անցնում երիտասարդ գիտաշխատողների նստաշրջաններում: Սա եղել և մնում է նստաշրջանների հիմնական խնդիրն ու նպատակը: Տասնյակ երիտասարդ պատմաբանների համար դրանք եղել են առաջին զեկուցումները: Գիտաժողովների ընթացքում դաստիարակվել և մասնագիտական պատրաստություն են ստացել պատմաբանների մի քանի սերունդներ: Այդ երիտասարդներից շատերը դարձել են ճանաչված պատմաբաններ, գիտության կազմակերպիչներ: Սոսկ նրանց անունների թվարկումը բազում էջեր կգբաղեցներ: Որակյալ գիտական զեկուցումների համար տարբեր տարիներին մի շարք երիտասարդներ պատվոգրերով և դրամական պարգևներով են պարգևատրվել (Աշոտ Մելքոնյան, Վահան Մելիքյան, Ռուբեն Սահակյան, Մարինա Չալյան, Լիլիթ Զաքարյան և ուրիշներ):

Խորհրդային տարիներին երիտասարդ մասնագետների համար դժվարություն էր ներկայացնում հոդվածների տպագրությունը: Հայտնի է, որ կային միայն մի քանի գիտական ամսագրեր, ուր պատմաբանները կարող էին հոդվածներ տպագրել: Հարցի մասնակի լուծում էր հանդիսանում գիտաժողովների հիմնադրույթների (թեզիսներ) հրատարակումը: Առաջին անգամ հրատարակվել է 1970 թ. անցկացված ինստիտուտի կրտսեր գիտաշխատողների 5-րդ նստաշրջանի զեկուցումների թեզիսները[11]: Հետագայում պարբերաբար հրատարակվել են նստաշրջանների հիմնադրույթները: Դրանք սովորաբար խմբագրվել են ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենների և երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահների կողմից:

---

[10] Հովակիմյան Վ., Երիտասարդ պատմաբանների գիտական նստաշրջան՝ նվիրված Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման 60-ամյակին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, N 10, էջ 111–112:

[11] ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտական աշխատողների և ասպիրանտների հինգերորդ սեսիա, զեկուցման թեզիսներ, Երևան, 1970, 17 էջ:

1997 թ. սկսած երիտասարդական նստաշրջանների լավագույն զեկուցումները հրատարակվում են ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքում[12]: Ինստիտուտի երիտասարդ աշխատակիցներից շատերն իրենց առաջին հոդվածները հրատարակել են հենց այս հանդեսում: Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահները նաև հանդիսանում են նշյալ հանդեսի խմբագրակազմի անդամներ, 1999 թ. սկսած նրանք ինստիտուտի գիտական խորհրդի անդամներ են, նաև տնօրինության անդամներ:

Մինչև այժմ Պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը հիմնականում զբաղվել է ամենամյա գիտական նստաշրջանների կազմակերպման, զեկուցումների հիմնադրույթների և ապա հոդվածների խմբագրման ու հրատարակման աշխատանքներով: Յուրաքանչյուր ժամանակաշրջան իր խնդիրներն է առաջադրում: Եթե 1990-ական թթ. նույնիսկ դժվարություն էր Երևանում գիտաժողով կազմակերպելը, ապա այժմ շատ հարցեր առավել հեշտությամբ են լուծվում: Արդեն 5 տարի շարունակ երիտասարդ գիտաշխատողների խորհուրդի նստաշրջանները շարունակաբար տեղի են ունենում Աղվերանում (ինչպես 1970–1980-ականներին), իսկ լավագույն զեկուցումները տպագրվում են՝ շնորհիվ 2005 թ. ինստիտուտում գործող տպարանի:

Ներկայումս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի անդամների թիվը 22 է՝ գիտաշխատողներ, կրտսեր գիտաշխատողներ, ավագ լաբորանտներ: Նրանցից 12-ը գիտությունների թեկնածու են, գրքերի և հոդվածների հեղինակ:

Այժմ երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը գործունեության ուղղությունների ճշգրտման փուլում է: Անկասկած, պետք է շարունակել նախկինից եկող ավանդույթը՝ հատկապես ամենամյա գիտական նստաշրջաններ հրավիրելը և լավագույն զեկուցումները հրատարակելը: Դրան զուգահեռ՝ անհրաժեշտ է կազմակերպել թեմատիկ երիտասարդական գիտաժողովներ, ինչը գիտական տեսակետից առավել արդյունավետ է: Դրանցից առաջինին արդեն ձեռնա-

---

[12] «Հայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու)», ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, N 1-14, Երևան, 1997–2013:

մուխ ենք եղել. այս տարվա նոյեմբերի սկզբին երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը Ծաղկաձորում կազմակերպում է «Հայաստանը և արաբական աշխարհը. պատմություն և արդի խնդիրներ» խորագրով գիտաժողով՝ նվիրված նշանավոր պատմաբան-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի ծննդյան 85-ամյակին: Պատրաստվում ենք նաև Հայոց պատմության տարբեր թեմաների վերաբերյալ գիտագործնական սեմինարներ, դասախոսություններ կազմակերպել, պարբերական խորհրդատվություններ անցկացնել ինստիտուտի ասպիրանտների և հայցորդների հետ:

Ամփոփելով՝ փաստենք, որ 1962 թ. ասպիրանտական նստաշրջանը, լինելով առաջինը, կոչված էր շարունակական լինելու: Ու այսօր հպարտորեն կարող ենք արձանագրել, որ 2013 թ. հոբելյանական տարում, երբ տոնում ենք Պատմության ինստիտուտի հիմնադրման 70-ամյակը, տեղի է ունենում ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 34-րդ նստաշրջանը՝ նվիրված ինստիտուտի հիմնադրման 70-ամյակին: Նախորդ 33 գիտական նստաշրջանների կազմակերպման գործում ջանքեր են գործադրել ինստիտուտի նախկին տնօրեններ Արամայիս Հարությունյանը, Գալուստ Գալոյանը, Հրանտ Ավետիսյանը, նախկին փոխտնօրեններ Գագիկ Սարգսյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Ռուբեն Ազիգբեկյանը, Աշոտ Մելքոնյանը, Գնել Գրիգորյանը: Իսկ վերջին տարիներին մեծ ջանքեր է գործադրում ինստիտուտի ներկա ղեկավարությունը՝ տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը, փոխտնօրեն, պ.գ.թ., դոցենտ Կարեն Խաչատրյանը, գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հակոբ Մուրադյանը: Նստաշրջանների կազմակերպման համար շնորհաշատ աշխատանք են կատարել ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախկին նախագահներ Վաչե Հովակիմյանը, Աղավնի Ութուջյանը, Վահան Փափազյանը, Ռուբեն Գասպարյանը, Քնարիկ Ավագյանը, Անահիտ Խոսրոևան, Արտակ Մաղալյանը:

Պատմության ինստիտուտի այսօրվա երիտասարդներն իրենց գիտական առօրյան այլևս չեն պատկերացնում առանց ամենամյա գիտական նստաշրջանների: Եվ, համաձայն տասնամյակների ընթացքում ձևավորված ավանդույթի, նստաշրջաններում ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողները, ասպիրանտներն ու հայցորդ-

ներն իրենց զեկույցներով կարծես հաշվետվություն են ներկայացնում նախորդ տարում կատարած աշխատանքների մասին, խորհուրդներ ստանում ավագ գործընկերներից: Նստաշրջանի ընթացքում յուրաքանչյուրս տեղեկանում ենք նաև մեր երիտասարդ գործընկերների գիտական պրպտումների արդյունքների մասին: Չափազանց կարևոր է, որ նստաշրջանները տեղի են ունենում Աղվերանում: Սա երիտասարդների համար նաև լավ հնարավորություն է՝ մտերմիկ մթնոլորտում առավել անմիջական շփվել ավագ գործընկերների ու ինստիտուտի ղեկավարների հետ, ինչը, անկասկած, չափազանց կարևոր է նրանց մասնագիտական աճի համար:

HAMO SUKIASYAN

THE COURSE MADE BY THE COUNCIL OF YOUNG RESEARCHERS OF THE INSTITUTE OF HISTORY OF NAS OF RA

SUMMARY

The administration of the Institute of History of the Academy of Sciences of Soviet Armenia decided to organize a session of young aspirants and researchers of the Institute, with a view to promote the proffessional growth of young historians. The first youth session took place on 25-26 October 1962 and became continuous. 33 sessions have been organized until now.

In 1979 the Council of Young Researchers was founded, playing an important role in the organization of youth conferences, scientific life and different entertainments of young researchers. Since 1970 the theses of the conferences of young researchers have been published. Since 1977 the best reports of the conferences are being published in the "Questions of Armenian History" - the annual collection of the Institute of History.

Several generations of historians have been educated and recieved their proffessional preparation during the youth conferences of the Institute of History. Many of them became prominent historians and skilled organizers of science.

АМО СУКИАСЯН

ПРОЙДЕННЫЙ ПУТЬ СОВЕТА МОЛОДЫХ УЧЕНЫХ ИНСТИТУТА ИСТОРИИ НАН РА

РЕЗЮМЕ

Институт истории Академии наук Советской Армении с целью содействия профессиональному росту молодых историков 25–26 октября 1962 года созвал первую молодежную сессию. До 2013 г. состоялось 33 сессии.

В 1979 году был сформирован Совет молодых ученых института, который имел важную роль в организации конференций, научной жизни и других мероприятий с участием молодых исследователей.

Начиная с 1970 г. публикуются тезисы конференций, а с 1997 г. лучшие доклады публикуются в ежегоднике Института истории "Вопросы истории Армении".

Через Совет молодых ученых прошли несколько поколений историков, которые получили профессиональную подготовку. Многие из них стали знаменитыми историками и квалифицированными организаторами науки.